ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 փետրվարի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

18
(3049)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՄ-ՈՒՄ ԿԱՐԾԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ «ՉԵՆ ՍՊԱՍՈՒՄ»

Մինչ Ազգային ժողովի ՔՊ խմբակցությունը ԱԺ ամբիոնից մեծ-մեծ խոստումներ էր տալիս, թե Հայաստանը համապատասխան օրենքի ընդունումից հետո գնալու է Եվրոպական միություն, այդ կառույցն իրականում անտեսում է Հայաստանին:

Փետրվարի 12-ին Հայաստանի խորհրդարանը ՔՊ ոչ ամբողջական՝ 63 կողմ, 7 դեմ ձայներով մեծ շուքով ընդունեց «Եվրամիությանը Հայաստանի անդամակցության գործընթացի» մեկնարկի մասին օրինագիծը, որն ԱԺ էր բերվել արտախորհրդարանական ուժերի կողմից: Ու թեեւ ՔՊ-ականները սա ներկայացնում են իբրեւ հույսի օղակ, հանրությանը հրամցնում են, թե ուր որ է Եվրոպայի դռները, առանց վիզայի, բացվելու են մեր առջեւ, իրականությունն այն է, որ սա ընդամենը համաձայնություն է գործընթացի մեկնարկի մասին. ոչինչ ավելին: Իսկ Հայաստանի՝ ԵՄ անդամակցության տեսլականը դեռ մշուշոտ է, եթե ոչ՝ անիրատեսական:

«Ժողովուրդ» օրաթերթը արձանագրեց, որ թեեւ նախագծի ընդունումից արդեն 2 օր է անցել, բայց ԵՄ-ից՝ ձայն բարբառո հանապատի:

Ո՛չ Եվրահանձնաժողովը, ո՛չ Եվրապառլամենտը ինստիտուցիոնալ արձագանք չտվեցին մինչեւ երեկ՝ իրենց աշխատանքային օրվա ավարտը: Ասել է թե՝ Եվրամիության բաղձալի օրենքի ընդունումից 48 ժամ անց որեւէ կառույց չի ողջունել, չի շնորհավորել եւ ոչ էլ որեւէ կերպ ինստիտուցիոնալ արձագանք է տվել Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպա գնալու մտադրությունների նախագծին:

Ստացվում է, որ սա փաշինյանական հերթական բլեֆն է ընտրություններից առաջ մեր հանրության եվրոպամետ զանգվածի համար, կամ էլ պարզապես պոպուլիստական հերթական քայլը, որը չեն ողջունում նաեւ այդ «մեծ ընտանիքի» անդամները:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներն այսօր առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին կանչել են ԱԺ՝ փակ հանդիպում ունենալու: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ օրակարգում մի քանի անգամ հետաձգված ու այդպես էլ անորոշ մնացած «Առողջության համապարփակ ապահովագրության» ծրագիրն է լինելու: Առողջության համապարփակ ապահովագրությունը պետք է ներդրվեր դեռեւս 2023 թվականին, ապա 2024 թվականի հուլիսին, հետո՝ 2025 թվականի հունվարի մեկից, բայց այդպես էլ մնաց օդում առկախ: Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ԱԺ-ում 2025 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ հայտարարել էր, թե 2025-ի բյուջեով Առողջության համապարփակ ապահովագրության համար գումար նախատեսված չէ: Այսօր ԱԺ-ում ՔՊ-ն Անահիտ Ավանեսյանի հետ կրկին կքննարկի նրա ձախողած նախագիծը: Ակնհայտ է, որ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում հատկապես Արսեն Թորոսյանի նշանակվելուց հետո Անահիտ Ավանեսյանին լավ օրեր չեն սպասվում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբոր՝ Սերոբ Գասպարյանի դեմ իշխանության յուրացման առիթով հարուցված քրեական գործով: Առաջիկայում պաշտպանական կողմերին կկանչեն կոմիտե եւ կհայտնեն նախաքննության ավարտի եւ գործը դատարան ուղարկելու մասին: Նշենք, որ քրեական գործով անցնող մեղադրյալների կալանքը օրերս դարձյալ երկարաձգվեց: Հիշեցնենք, որ Գասպարյանը մեղադրվում է մի քանի Արցախցի անձանց հետ նախնական համաձայնությամբ իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու համար: Քրեական հետապնդում էր հարուցվել 7 անձի նկատմամբ: Նրանցից 3-ը կալանավորվել են, իսկ 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում. վերջիններիս որոնում են արդեն շուրջ 5 ամիս:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն մարմինը 2024 թվականի զեկույցում գրել է, որ կոռուպցիայի ընկալման սանդղակում Հայաստանի կոռուպցիայի ընկալման համաթիվը մնում է նույնը՝ 47: Ոչ մի տեղաշարժ չկա: Այսինքն՝ կոռուպցիայի դեմ պայքարի գործում ոչ մի քայլ առաջ չենք գնացել: Տեղեկացնենք, որ 0-ն, ըստ «Թրանսփարենսիի», բացարձակապես կոռումպացվածն է, իսկ 100-ը՝ բացարձակապես մաքուր սանդղակը, իսկ եթե արդեն 2 տարի նույն թիվն է ֆիքսում այս անկախ մարմինը, նշանակում է, որ կոռուպցիայի դեմ պայքարում Փաշինյանի իշխանությունը 0 արդյունք է տվել: Սա այն դեպքում, երբ Արեւմտյան տարաբնույթ դրամաշնորհային ծրագրեր են իրականացվել, երբ հակակոռուպցիոն տարբեր մարմիններ են հիմնվել՝ այդ թվում եւ առանձին դատարան, բայց, միեւնույնն է, կոռուպցիայի դեմ պայքարում հեղինակավոր «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» կառույցը արձանագրել է անարդյունք աշխատանք. ոչ մի տեղաշարժ չկա:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԺԱՆԵԼ ԵՆ». ՄԵՏԱՔՍԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի Ազգային ժողովի պատգամավոր Մեսրոպ Հակոբյանի հետ:

-Տիկին Հակոբյան, ինչպե՞ս կարձագանքեք ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հայտարարությանը: Ի՞նչ կարծիք ունեք այդ մասին:

-Ես վաղուց ո՛չ զարմանում, ո՛չ զայրանում եմ իրենց քայլերից, հայտարարություններից, որովհետեւ այն մարդիկ, որոնք ուղիղ հանձնեցին Արցախը, նրանցից պետք էլ չէ որեւէ բան ակնկալել: Ես չեմ էլ փորձում հակադարձել, հակափաստարկներ բերել: Բավական են այն ցցուն փաստերը, որ Ակնայում նրանք նկարվում էին ոչ թե հայրենասիրությունից դրդված, այլ Ադրբեջանին ու մեզ՝ բոլորիս, մեսիջ փոխանցելու ենթատեքստով: Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում աղաղակում, կոկորդ էր պատռում՝ «Արցախը Հայաստան է, եւ վե՛րջ»: Դա նույնպես արեց ոչ թե հայրենասիրությունից, այլ որովհետեւ պետք էր սադրել ու հրահրել պատերազմ: Երբ մենք շրջափակման մեջ էինք գտնվում, Հայաստանն ամբողջությամբ՝ ի դեմս Հայաստանի իշխանությունների, ցույց տվեց ամբողջ աշխարհին, որ հրաժարվում է Արցախից: 2022 թվականի հոկտեմբերին Նիկոլ Փաշինյանը ճանաչեց Արցախը Ադրբեջանի կազմում:

Այսինքն՝ այն մարդիկ են խոսում, որոնք հանձնել են Արցախը, որոնք հենց այս պատերազմը հրահրել են: Մեզ համար տարբերություն չի եղել՝ արցախցին է կռվում, թե Հայաստանի կամ Սփյուռքի մեր հայրենակիցը, կարեւորը, որ բոլորը մարտնչել են հանուն հայրենիքի: Եվ այդտեղ որեւէ մեկը չի հաշվել եւ չի նայել, թե ով պետք է կռվեր, եւ ով՝ ոչ: Չնայած, ես կարծում եմ, որ այս հողերի անունները շատ բան են ասում: Այս ամբողջ պատմության մեջ դուրս մնաց այն կոնտեքստը, որ ինքը նաեւ սյունեցիներին դիմեց. դա նախազգուշացում էր, որ հաջորդը հենց Սյունիքն է: Մարդիկ բաժանել են մեր հայրենիքը: Հայաստանը բաժանել են առանձին մարզերի, Արցախը՝ ընդհանրապես առանձին:

-Տիկին Հակոբյան, ԱԺ-ում պարզ դարձավ, որ Նիկոլ Փաշինյանը նույնպես այդ տեսակետը կիսում է, եւ փորձեց արդարացնել Ալեն Սիմոնյանին: Երբ պահանջ ներկայացրին Ալեն Սիմոնյանին, որ ներողություն խնդրի, կարծեք թե վարչապետը նույնպես արդարացրեց այդ տեսակետը: Դուք ի՞նչ կարծիք ունեք:

-Իհարկե վարչապետը պետք է կիսեր տվյալ տեսակետը, որովհետեւ այդ հանցախումբը, որի ղեկավարն ինքն է, ունի ընդհանուր ծրագիր եւ նպատակ: Իրենք առանձին չեն գործում: Ծրագրի առաջին հատվածը կատարել են եւ ազատվել Արցախից: Հիմա հասել են Հայաստանի Հանրապետությանը եւ, բնականաբար, գործում են համատեղ: Մենք պատահական չենք ասում՝ Նիկոլ Փաշինյանի «ուսպարկերը»: Իրենք բոլորը հրահանգներ կատարող են՝ ուզում է լինի Ալենը, թե մյուսները: Հիշում եք՝ ՔՊ-ական մի պատգամավոր էլ շրջափակման ժամանակ ասում էր, որ 50,000 արցախցիներին պիտի զոհենք՝ փրկելու Հայաստանը: Այսինքն՝ սրանք այն մարդիկ են, որոնց «շեֆն» ինչ ուղղություն տա՝ դրանով էլ գնալու են: Հայտնածը Ալենի անձնական դիրքորոշումն ու կարծիքը չէր. նրանք վարվում են այնպես, ինչպես իրենց «շեֆն» ասում է:

Հիշեցնենք, որ խորհրդարանում արցախցի լրագրողներից մեկը Ալեն Սիմոնյանից հետաքրքրվեց, թե ե՞րբ է վերադառնալու Արցախ, Սիմոնյանը պատասխանեց՝ երբ խաղաղության պայմանագիր ստորագրվի: Լրագրողը հետաքրքրվեց՝ արդյոք այժմ արցախցիների վերադարձի հարցով բանակցություններ գնո՞ւմ են, Սիմոնյանը պատասխանեց. «Դուք դրա մասին շատ լավ տեղյակ եք, երբ որ անվտանգ կլինի, այդ հարցը կբարձրացվի, էլ ի՞նչ հարցեր ունեք»: Լրագրողը հարցրեց՝ ինչո՞ւ է Արցախն անվանում Ղարաբաղ, Սիմոնյանը պատասխանեց. «Դուք չեք ասո՞ւմ, որ ղարաբաղցի եք, Ղարաբաղ է: Ես քաղաքական գործիչ եմ, եւ ես դեմ եմ, որ այլ երկրի քաղաքացի իմ քաղաքներից մեկը անվանի ադրբեջանական անուններով: Ես քաղաքական գործչի էթիկան պետք է պահպանեմ: Ձեզ թվում է, թե ես ակտիվիստ եմ ու պետք է հաճո բաներ ասե՞մ, որ վարկանիշս բարձրանա»: Ալեն Սիմոնյանը հունից դուրս եկավ լրագրողի հարցերից, ապա ասաց. «Դուք դուրս եկաք այդտեղից՝ չնայած կարելի էր մնալ եւ պայքարել մինչեւ վերջ: Պետք էր կռվել, պետք էր կռվել, դուք դուրս եկաք»:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՃԱՆԱՉՈՒՄ

ՔՊ-ԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՐՏՈՆՅԱԼ ԵՆ ԶԳՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՔՊ-ական պատգամավոր Էմմա Պալյանն ամուսնուն նշանակել է իրեն հասարակական հիմունքներով օգնական, հետո վերջինս պարզաբանել էր, թե դա արել է, որպեսզի ամուսինը, իրեն ԱԺ բերելուց հետո, դրսում չսպասի:

Հայտնել էինք նաեւ՝ Գյումրի քաղաքը սպասարկող «Գյումրի ավտոբուս» ՓԲԸ-ի տարածքում մեքենաների լվացման կետ է բացել: Էմմա Պալյանի եղբայրը՝ Հայկ Պալյանը, ՔՊ պատգամավոր Կարեն Սարուխանյանի օգնականն է: Ի դեպ, երբ 2018-ի իշխանափոխությունից հետո Էմմա Պալյանն էր Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանի օգնականը, որոշակի դադարից հետո գործուղվեց Ազգային ժողով՝ կրկին որպես Սարուխանյանի օգնական, իսկ 2021 թվականին՝ պատգամավորի մանդատ ստանալուց հետո, ԱԺ բերեց ամուսնուն որպես իրեն օգնական: Ապա բերեց եղբորը, ով այժմ ՔՊ-ական պատգամավոր Կարեն Սարուխանյանի օգնականն է:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացրել էր Էմմա Պալյանի եղբոր՝ Հայկ Պալյանի հայտարարագիրը: Այսպիսով, ուսումնասիրել էինք Հայկ Պալյանի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների եւ ծախսերի հայտարարագիրը, ինչից էլ հասկանում ենք, որ ԱԺ-ից տարեկան 3 մլն 504 հազար դրամ աշխատավարձից կուտակված եկամուտ ունեցող Հայկ Պալյանը 2023 թվականին ձեռք է բերել 25 մլն դրամ արժողությամբ բնակարան: Բնակարանը, որը միանձնյա սեփականությամբ է ձեռք բերվել, գտնվում է Շիրակի մարզի Գյումրի համայնքում: 2022 թվականին Հայկ Պալյանը ձեռք է բերել մեքենա՝ 2012 թվականի արտադրության Ford մակնիշի: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 2,5 մլն դրամ: Պալյանի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 25 մլն դրամ: Մամուլը գրել էր նաեւ, որ Էմմա Պալյանի եղբայրը գրենական պիտույքների խանութ ունի Գյումրիում, ու ՔՊ-ական պատգամավորը ստիպում է, որ բոլոր դպրոցները եղբոր խանութից առեւտուր անեն: Այսօր՝ հեղափոխությունից հետո, ֆինանսական վիճակը կտրուկ բարելավված, ընտանիքի անդամներին ԱԺ-ում աշխատանքի տեղավորած Էմմա Պալյանը զարմանք է հայտնել՝ հանցագործությո՞ւն է, որ Շիրակի մարզի 146 դպրոցներից իր եղբորը պատկանող գրենական պիտույքների խանութից 7-8 դպրոց գնումներ են անում:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՉԵՆ ԳՏԵԼ

ArmLur.am-ը գրել էր, որ ոստիկանությունը փետրվարի 10-ին Երեւանի քաղաքապետարանի դիմացից «բերման է ենթարկել» «Մայր Հայաստան» դաշինքի մեքենան, որով ավագանու ընդդիմադիր անդամները տրանսպորտի թանկացման դեմ իրազեկման ակցիաներ են իրականացրել:

Երկուշաբթի օրը «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյանը հանձնաժողովի նիստից հետո տեսել է, որ չկա ավտոմեքենան, որով իրազեկման ակցիաներ են իրականացնում: Ոստիկանները տեղափոխել են այն տուգանային հրապարակ՝ պատճառաբանելով, թե կասկածներ կան ու մեքենան պետք է ստուգեն:

ArmLur.am-ին «Մայր Հայաստան» խմբակցությունից Սամվել Հակոբյանը հայտնել է, որ ատուգումներից հետո մեքենան վերադարձրել են: Հարցին՝ խուզարկման արդյունքում ինչ-որ բան գտե՞լ են, ավագանու անդամն ասել է. «Ի՞նչ պետք է գտնեին, եթե բան չկար: Միայն տուգանել են 20 հազար դրա՝ իբրեւ թե սխալ կայանելու համար, բայց դա էլ բողոքարկելու ենք», - ասաց նա»:

ՊԱՏԱՍԽԱՆԻՑ ԳՈՀ ՉԵՆ

Կառավարությունում երեկ նորից հավաքվել էին տնտեսվարողները: Նրանք հանդիպել են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախագահ տեղակալ Վրեժ Մխիթարյանի հետ, սակայն տնտեսվարողները դժգոհ են հանդիպման արդյունքներից: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասել է Կարինե Գեւորգյանը, որը նույնպես մասնակցում էր հանդիպմանը: «Ոչ մի դրական բան չասացին: Ասացին այն՝ ինչ միշտ. փաստաթղթավորման պարագայում կնվազի հարկը, հակառակ դեպքում կավելանա: Շատ դժգոհ ենք հանդիպումից: Բողոքի ակցիաները կշարունակվեն, պետք է քննարկենք բոլորով, հասկանանք՝ ինչպես ենք շարունակելու», - ասել է նա: Նշենք, որ, կառավարությունից ընդունել էին բողոքի ակցիայի մասնակից 8 տնտեսվարողի. փակ հանդիպում է տեղի ունենում: Հիշեցնենք, որ վաղ առավոտից տնտեսվարողները կառավարության շենքի դիմաց հերթական բողոքի ակցիան էին իրականացնում:

Նրանք նշում էին, որ հունվարի 1-ից ուժի մեջ մտած այս փոփոխությունը մի քանի անգամ ավելացրել է իրենց հարկային բեռը, ինչի հետեւանքով կարող են լուրջ խնդիրների առաջ կանգնել:

ՄԵԿՆԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը մեկնել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ մասնակցելու Մյունխենի անվտանգության համաժողովին:

Նախատեսված են Հայաստանի Հանրապետության պաշտպանական գերատեսչության ղեկավարի երկկողմ հանդիպումներ գործընկերների հետ:

ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՓԵՏՐՎԱՐԻ 18–ԻՆ

ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Տիրան Խաչատրյանի՝ 44-օրյա պատերազմին առնչվող քրեական գործով նախնական դատալսումները կմեկնարկեն փետրվարի 18-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ Գորիսում: Գեներալի փաստաբաններից Վարազդատ Հարությունյանը փոխանցել է. «Միջնորդելու ենք, որ դատաքննությունը դռնբաց լինի, հանրությունն իրական տեղեկություն ստանա Տիրան Խաչատրյանի մեղադրանքի մասով»: Նշենք, որ 2025 թվականի հունվարի 3-ին Տիրան Խաչատրյանի նկատմամբ հարուցվել էր հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով: Քննչական կոմիտեի հաղորդմամբ՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի մարտական կարգադրության համաձայն նշանակված լինելով որպես Զորքերի հարավային խմբավորման հրամանատար՝ 2020 թվականի հոկտեմբերի 7-17-ն ընկած ժամանակահատվածում, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորել է անփույթ վերաբերմունք, այն է՝ չի ստեղծել հարավային խմբավորման կառավարման կետ՝ իր բոլոր տարրերով, մարտական գործողությունների վարման ընթացքում լիարժեք չի կատարել կառավարմանը բնորոշ մի շարք միջոցառումներ, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

ՀԵՏՔԵՐ ՉԿԱՆ

ArmLur.am-ը տեղեկացել է, որ ԱԱԾ գեներալ Տիգրան Բարսեղյանի դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ. դիակի արտաքին զննությամբ բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ի տեղեկություններով՝նրա մարմինը գտել էին տանը՝ մահանալուց 3 օր հետո: Նշենք, որ Բարսեղյանը նախկինում զբաղեցրել է ՀՀ ԱԱԾ Սահմանադրության, հասարակական կարգի պահպանության, ահաբեկչության դեմ ուղղված պայքարի գլխավոր վարչության պետի պաշտոնը: Ընդգծենք, որ վերջինիս որդին զոհվել էր 44-օրյա պատերազմի ընթացքում:

ՀԱՄԱԼԲՈՒՄՆԵՐ

Շարունակվում է ներքին գործերի նախարարության նորաստեղծ ուսումնական հաստատության անձնակազմի համալրման գործընթացը: ՆԳՆ կրթահամալիրի ղեկավար կազմը համալրվել է. նշանակված են ռեկտորը եւ պրոռեկտորները, ովքեր ունեն բարձր մասնագիտական որակավորումներ եւ գիտական ու կրթական գործունեության հարուստ փորձառություն: Ռեկտորի պաշտոնում նշանակվել է Մանուկ Մուրադյանը: Հանձնաժողովների կազմում ընդգրկված են ոչ միայն ներքին գործերի նախարարության, այլեւ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ հոգեբաններ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՀԱՆԴԻՊԵԼ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ նրա ամերիկացի պաշտոնակից Դոնալդ Թրամփը վերջերս կայացած հեռախոսազրույցի ընթացքում պայմանավորվել են իրենց օգնականներին հանձնարարություններ տալ՝ անհապաղ սկսել երկու երկրների ղեկավարների հանդիպման նախապատրաստությունը: Այս մասին ասել է Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: «Պետությունների ղեկավարները՝ երեկ հեռախոսազրույցի ընթացքում, պայմանավորվել են, որ կշարունակեն շփումը՝ կողմնորոշվելով դեպի առանձին հանդիպումը, ինչպես նաեւ պայմանավորվել են, որ անհապաղ համապատասխան հանձնարարականներ կտան օգնականներին, որ նրանք սկսեն համապատասխան աշխատանքը», - ասել է նա:

Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղարը հավելել է, որ Կրեմլը երկու ղեկավարների հանդիպումն օպերատիվ կերպով նախապատրաստելու անհրաժեշտություն է տեսնում: «Անշուշտ, նման հանդիպման բավականին օպերատիվ անցկացման պահանջ կա: Պետությունների ղեկավարները խոսելու շատ բան ունեն: Օրակարգում շատ թեմաներ են, որոնք երեկ հակիրճ նշվել են հեռախոսազրույցի ընթացքում: Բայց առայժմ ինչ-որ ժամկետների մասին խոսել հնարավոր չէ, որովհետեւ նախապատրաստական աշխատանքն այս օրերին դեռ նոր պետք է սկսվի», - ասել է Պեսկովը:

Հիշեցնենք, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը երկար եւ արդյունավետ հեռախոսազրույց էր ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

«Մենք քննարկել ենք Ուկրաինային, Մերձավոր Արեւելքին, էներգետիկային, արհեստական բանականությանը, դոլարի հզորությանն առնչվող հարցեր եւ մի շարք այլ թեմաներ: Մենք անդրադարձանք մեր ժողովուրդների մեծ պատմությանը եւ այն փաստին, որ միասին այդքան հաջող կռվեցինք Երկրորդ համաշխարհային պատերազմում՝ հիշելով, որ Ռուսաստանը տասնյակ միլիոնավոր մարդկանց կորցրեց, եւ մենք նույնպես կորցրինք շատ մարդկանց: Մենք խոսեցինք մեր ազգերի ուժեղ կողմերի եւ այն մեծ օգուտի մասին, որ մի օր կունենանք՝ միասին աշխատելով»,- գրել է Թրամփը:

Ըստ նրա՝ Ռուսաստանի Դաշնության նախագահն ու ինքը ցանկություն են հայտնել դադարեցնել միլիոնավոր կյանքեր խլող ռուս-ուկրաինական պատերազմը:

«Նախագահ Պուտինն անգամ օգտագործեց իմ քարոզարշավի շատ ուժեղ կարգախոսը՝ «Ողջախոհություն»: Մենք երկուսս էլ շատ ամուր հավատում ենք դրան: Պայմանավորվեցինք աշխատել միասին շատ սերտորեն: Նաեւ պայմանավորվել ենք, որ մեր համապատասխան թիմերը անհապաղ սկսեն բանակցություններ, եւ մենք կսկսենք զանգահարել Ուկրաինայի նախագահ Զելենսկիին, որպեսզի տեղեկացնենք նրան զրույցի մասին, մի բան, որը ես կանեմ անհապաղ»,- հայտնել է ԱՄՆ նախագահը:

Նա խնդրել է պետքարտուղար Մարկո Ռուբիոյին, ԿՀՎ-ի տնօրեն Ջոն Ռաթքլիֆին, Ազգային անվտանգության հարցերով խորհրդական Մայքլ Վալցին եւ դեսպան, հատուկ բանագնաց Սթիվ Վիտկոֆին ղեկավարել բանակցությունները, որոնք, իր խորին համոզմամբ, հաջողությամբ կպսակվեն: «Միլիոնավոր մարդիկ են զոհվել պատերազմում, որը չէր լինի, եթե ես լինեի նախագահ, բայց դա տեղի ունեցավ, ուստի այն պետք է ավարտվի: Այլեւս կյանքեր չպետք է կորցնել: Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել նախագահ Պուտինին այս կոչի հետ կապված իր ժամանակի եւ ջանքերի համար, ինչպես նաեւ երեկ Մարկ Ֆոգելին՝այդ հրաշալի մարդուն ազատ արձակելու համար, ում ես անձամբ ողջունեցի երեկ Սպիտակ տանը: Հավատում եմ, որ այս ջանքերը կհանգեցնեն հաջող ավարտի», - եզրափակել է իր գրառումը Թրամփը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ

Բաքվում երեկ շարունակվում էր Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյան շինծու մեղադրանքներով դատավարությունը: Ադրբեջանական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ դատական նիստը շարունակվել է պետական դատախազների կողմից մեղադրական եզրակացության հրապարակմամբ:

Հիշեցնենք, որ Ադրբեջանի գլխավոր դատախազությունը շինծու մեղադրանք է առաջադրել Ադրբեջանի կողմից օկուպացված Արցախի ութ նախկին ռազմաքաղաքական առաջնորդներին, որոնք ապօրինաբար ձերբակալվեցին 2023 թվականի սեպտեմբերին եւ հոկտեմբերին այն բանից հետո, երբ Ադրբեջանը ռազմական հարձակում սկսեց Արցախի դեմ՝ էթնիկ զտման ենթարկելով 120.000 հայի: Նախորդ դատական նիստին, որը տեղի է ունեցել փետրվարի 10-ին, նախագահող դատավորը հայտարարել էր, որ դատավարությանը նոր թարգմանիչներ են բերվել: Ավելի ուշ, անդրադառնալով Ռուբեն Վարդանյանի միջնորդությունները չբավարարելուն, փաստաբանը հայտարարել էր, որ գործը քննող դատավորների կոլեգիան շահագրգռված է քրեական հետապնդմամբ եւ բացարկի միջնորդություն էր ներկայացրել դատարանի կազմին: Նշենք, որ Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանին եւ պետնախարար Ռուբեն Վարդանյանին սպառնում է ցմահ ազատազրկում՝ առաջադրված շինծու մեղադրանքների պատճառով:

Վերջում հավելենք, որ Արցախի մյուս պաշտոնյաների՝ շուրջ 15 անձի գործով դատական նիստը տեղի կունենա այսօր՝ փետրվարի 14-ին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԻՐԱՆԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Իրանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Մաջիդ Թախտ-Ռավանչին վերահաստատել է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը շարունակում է պահպանել իր դիրքորոշումը տարածաշրջանի աշխարհաքաղաքականության անփոփոխելիության վերաբերյալ: Այս մասին նա նշել է Իրանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանի հետ հանդիպման ընթացքում՝ ընդգծելով, որ Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը Իրանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի եւ Իրանի միջեւ քաղաքական, տնտեսական եւ էներգետիկ ոլորտներում համագործակցության խորացման հնարավորությունները: Մաջիդ Թախտ-Ռավանչին ընդգծել է, որ երկու երկրների միջեւ համագործակցության համար առկա են բոլոր անհրաժեշտ նախադրյալները: Գրիգոր Հակոբյանն իր հերթին շնորհավորել է Իսլամական հեղափոխության հաղթանակի 46-րդ տարեդարձի կապակցությամբ՝ նշելով, որ Հայաստանի կառավարության եւ ժողովրդի համար Իրանի հետ փոխադարձ հարգանքի եւ վստահության վրա հիմնված հարաբերությունների խորացումը մեծ կարեւորություն ունի: Հանդիպման ընթացքում կողմերը նաեւ մտքեր են փոխանակել տարածաշրջանային օրակարգի արդիական հարցերի շուրջ՝ ընդգծելով երկկողմ եւ բազմակողմ համագործակցության կարեւորությունը տարածաշրջանի կայունության եւ անվտանգության ապահովման գործում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԻՆՉ Է ԵՂԵԼ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔԻՑ ԱՌԱՋ

Քրեական բարքերը շարունակում են խորանալ մեր հասարակության մեջ, որքան էլ որ ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը ամբիոններից հայտարարում է քրեական ենթամշակույթի անթույլատրելիության մասին:

ArmLur.am-ը հերթական ահազանգերն է ստանում Նորագավիթ վարչական շրջանից: Իսկ ինչն է խնդիրը. 2024 թվականի հունիսի 13-ին Նորագավիթի նույնանուն՝ Նորագավիթ թաղամասում գտնվող սուպերմարկետի մոտ հայտնաբերվել է նույն թաղամասի 26-ամյա բնակիչ Միեր Խաչատրյանի դին՝ հրազենային վնասվածքով: Քննությամբ պարզվել է, որ երիտասարդը սպանվել է մի խումբ անձանց կողմից, ովքեր զինված են եղել ատրճանակով եւ ինքնաձիգով, ինչպես նաեւ դեպքի վայրում գտնված եւ ակտիվ դերակատարում ունեցող մի խումբ անձանց կողմից, որոնք եղել են կացնով եւ մահակներով: Ակնհայտ է, որ այս սպանությունը ունեցել է նախապատմություն, սակայն իրավապահները չեն կարողացել ժամանակին տիրապետել օպերատիվ իրավիճակին՝ կանխելու ու նախականխելու հնարավոր հանցանքը:

Այս ուշագրավ դեպքի մասին ArmLur.am-ին նորագավիթցիները ահազանգեցին, որ սպանված Միեր Խաչատրյանի շուրջ առեղծվածային իրադարձություններ են եղել: Մասնավորապես, մինչ սպանությունը Միեր Խաչատրյանը վիճաբանել է 140 դպրոցի ուսուցիչ Դավլաթյանի թոռ Արթուրի հետ ու նրան դանակահարել են, սակայն գործը չի հասել իրավապահներին:

Դեպքից առաջ՝ Միեր Խաչատրյանի մեքենայի վրա գազ տեղադրելուց հետո, Միերը Խաչատրյանը նկատել է, որ մեքենայի վրայից պոկված դետալ կա: Ավելի ուշ պարզել է, որ այդ դետալը պայթուցիկ սարք է: Անգամ Նորագավիթում հիշում են, որ Միերը մշտապես եղել է զինված, քանի որ մտերիմներին բացատրել է, թե իրեն հետեւում են ու ցանկանում վնասել: Նաեւ դրա համար է, որ ընկերները ուղեկցել են Միերին, դուրս գալուց առաջ էլ ստուգել են տարածքը՝ հասկանալու՝ հետեւողներ կան, թե ոչ:

Ըստ ամենայնի՝ նա ոսկրի պես շատերի կոկորդին է մնացած եղել:

ArmLur.am-ին զանգահարած քաղաքացիները պատմեցին, որ դեպքից առաջ Միերը մեքենան տարել է նորոգելու Նորագավիթում՝ Էրիկի ու Դավոյի մոտ, ովքեր նորոգման ժամանակ հայտնաբերել են նրա մեքենայում նաեւ տեղեկություններ հավաքագրող սարքեր: Դեպքի մասին տեղյակ են եղել Միերի ընտանիքի անդամները, հորեղբոր որդիները եւ ընկերները, ինչպես նաեւ քույրը: Իսկ թե ինչու իրավապահները ոչինչ չեն արել՝ իրենց անպատժելիությամբ նպաստելով եւս մեկ հանցանքի, բարդ է ասել: Բայց փաստ է, որ մեկի կյանքը խլվեց, մյուսինը՝ սպանողինը, խեղվեց անպատժելիության հետեւանքով: Ու այսօր իրավապահ մարմինները կենտրոնացել են ու քննում են մեքենան արագ քշելու հանգամանքից առաջացած վեճի դեպքը, մինչդեռ պատմությունը խոր արմատներ ունի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԱԱԾ

ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի փոխանցմամբ՝ ԱԺ-ում Նիկոլ Փաշինյանի հայտարարության հիմքով ԱԱԾ տնօրեն Արմեն Աբազյանին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել: «Տեղեկացրել եմ, որ հարցուպատասխանի ժամանակ, պատասխանելով Քրիստինե Վարդանյանի հարցին, Նիկոլ Փաշինյանը «Հայաստան» խմբակցությանը մեղադրել է ՀՀ-ի դեմ հիբրիդային պատերազմին մասնակցելու եւ խափանարարության մեջ, իսկ դա պարունակում է Քրեական օրենսգրքի 299 հոդվածի՝ տեսական դավաճանության տարրեր: Նիկոլ Փաշինյանի բառացի արտասանված խոսքերը նամակում կցել եմ եւ ԱԱԾ տնօրենին հորդորել եմ ընդունել սա հաղորդում հանցագործության մասին, ընթացք տալ եւ տեղեկացնել ընթացքի մասին»,- ասաց նա: Գեղամ Մանուկյանը շարունակեց. «Որպեսզի ամեն անպատասխանատու հայտարություն, ինչը Նիկոլ Փաշինյանը սիրում է անել այս վեց տարիներին, անպատասխան չմնա, տեսնենք՝ ՀՀ-ի դեմ հիբրիդային պատերազմ ո՞վ է անում, ո՞վ է օտար երկրների բառապաշարը ՀՀ-ում օգտագործում եւ ո՞վ է աշխատում հայ ժողովրդի դեմ»:

ՀԱՅՑ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Ադրբեջանը Հայաստանի դեմ հայց է ներկայացրել Հաագայի մշտական արբիտրաժային դատարան՝ «Եվրոպական վայրի բնության եւ բնական միջավայրերի պահպանման մասին» («Բեռնի կոնվենցիա») 1979թ. կոնվենցիայի հիման վրա: Այս մասին հայտնում է Ադրբեջանի ԱԳՆ-ն: Հայտարարության համաձայն՝ հայցը ներկայացվել է փետրվարի 12-ին: Փաստաթղթում նշվում է, թե Հայաստանը «թույլ է տվել կոնվենցիայով ստանձնած շրջակա միջավայրի պահպանության իրավական պարտավորությունների բազմաթիվ խախտումներ»: Բաքուն հայտարարում է, թե «Հայաստանից պահանջում է ամբողջական փոխհատուցում բնակավայրերի եւ վայրի բնության զանգվածային ոչնչացման համար, այն գործողությունների համար, որոնք բացասաբար են ազդել ադրբեջանական տարածքների վայրի բնության հարյուրավոր տեսակների եւ կենսամիջավայրերի վրա, ներառյալ՝ լայնածավալ անտառահատումները, էկոլոգիապես անարդյունավետ ծառահատումները, հանքարդյունաբերությունը եւ հիդրոէլեկտրակայանների կառուցումը»:

«Ադրբեջանը կշարունակի իր գործունեությունն արդարության ապահովման ուղղությամբ եւ միջազգային պատասխանատվության կենթարկի Հայաստանին օկուպացիայի ժամանակ շրջակա միջավայրի, կենդանիների տեսակների եւ բնակավայրերի ոչնչացման ու պաշտպանությանն ուղղված միջոցներ չձեռնարկելու համար»,- ասվում է հայտարարության մեջ:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԳԻՉԸ ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱՎՈՐԻՆ

2025 թվականի փետրվարի 6-ին երգիչ Սարո Թովմասյանը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ ընդդեմ ՀՀ պարեկային ծառայության՝ 2024 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ArmLur.am-ը տեղեկացավ, որ միջնորդությամբ, մասնավորապես, նշել է, որ զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 2 տարի ժամկետով: Վերջինս աշխատում է, եւ աշխատանքի արդյունավետ կազմակերպման եւ կատարման համար առաջնային պայման է հանդիսանում մեքենա վարելը, առանց որի անհնար կլինի իրականացնել աշխատանքային գործունեությունը:

Այսինքն՝ հայցվորի ընտանիքի եկամտի միակ աղբյուրը հայցվորի աշխատանքն է, որից վերջինս փաստացի կարող է զրկվել՝ կապված վիճարկվող վարչական ակտի կատարման հետ, եւ որի արդյունքում վերջինս չի կարողանում պատշաճ իրականացնել իր աշխատանքային պարտականությունները, ինչպես նաեւ հոգալ իր խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ մինիմալ ծախսերը: Նշել է նաեւ, որ վարչական ակտի կատարումը զգալի վնաս կարող է պատճառել հայցվորին, քանի որ վերջինս դրա արդյունքում զրկվում է իր եկամտի միակ աղբյուրը հանդիսացող աշխատանքից, եւ որն էլ հենց խոչընդոտում է իր խնամքին գտնվող անձանց խնամքը պատշաճ իրականացնելուն: Քննարկելով հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ դատարանը մերժել է երգչին: Հիշեցնենք, որ Սարո Թովմասյանին Պարեկային ծառայության աշխատակիցները կանգնեցրել են ու զրկել են վարորդական իրավունքից: Վերջինս դատարան է դիմել հունվարի 29-ին ու բողոքարկում է պարեկային ծառայության որոշումը:

ԱՊՕՐԻՆԻ ՋԵՆՔ Է ՈՒՆԵՑԵԼ

Համայնքային ոստիկանության Մետրոպոլիտենի պահպանության բաժնի ծառայողները ապօրինի զենք պահելու եւ կրելու կասկածանքով «Բարեկամություն» կայարանի նախասրահում ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Էջմիածին քաղաքի բնակիչ 21-ամյա երիտասարդին: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է 3 փամփուշտով լիցքավորված գազային ատրճանակ եւ գաղտնի փականով դանակ: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ՍՏՈՒԳՈՒՄ՝ 5 ՄԱՄՆԱՃՅՈՒՂՈՒՄ

ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ներկայացրել է 2024թ. վերահսկողության արդյունքները: Իրականացվել է 5 ստուգում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 5 մասնաճյուղում: Արձանագրվել է 916 իրավախախտման դեպք, 13,013 ապօրինի հատված ծառ, 3,778.5 խմ ապօրինի փայտանյութ: Կիրառվել է 293 վարչական տույժ, 29,910,000դր տուգանք: Հաշվարկվել է 1,136,214,472 դր. պատճառված վնաս: Վայրի կենդանիների արտահանման, պահման պայմանների խախտման եւ ապօրինի որսի՝ 62 դեպք: Առգրավվել է 7 զենք, 50 փամփուշտ, 73 լողամիջոց, 923 ձկնորսական ցանց 2,589 խեցգետնորսիչ:

ԿԻՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Փետրվարի 12-ին՝ գիշերը ժամը 3-ին, Լճաշեն բնակավայրի «Սովխոզի» բնակելի շենքում օգնության կանչեր են լսվել՝ «փրկեք մարդ է մահանում»: Արդյունքում, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նշված բնակարանում ապրել են հնդկաստանի քաղաքացիներ: Հնդկաստանի քաղաքացի Տ.Ա.-ն պատմել է, որ սեռական հարաբերությունների շուրջ ունեցած տարաձայնությունների պատճառով վիճել է ընկերոջ հետ ու ծագած վեճի ընթացքում ընկերը ձեռքերով եւ ոտքերով հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին, որից հետո Տ.Ա.-ն ծծմբաթթուն լցրել է ընկերոջ մարմնին, ով «Սեւան» հիվանդանոցում, գիտակցության չգալով, մահացել է: Կինը ձերբակալվել է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 12-ից 13-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 134 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԵՆՏՐՈՆԱՑՐԵԼ ԵՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքի կենտրոնում գեղեցիկ շենքը, որը խորհրդային ժամանակների հրդեհից մնացել էր որպես շրջգործկոմի՝ այրված պատերով շինություն, մոտ 10 տարի առաջ նորոգվեց, վերագործարկվեց, բացվեց որպես Տավուշի հարկային տեսչության կառույց: Դրա բացումը կայացավ մեծ հանդիսավորությամբ: Այժմ այդ շենքի միայն առաջին հարկում են աշխատում, երկրորդ հարկը դատարկ է: Մոտ կես տարի առաջ Տավուշի հարկային տեսչության ստուգողների ու օպերատիվ-հետախուզական բաժինները տեղափոխվել են Երեւան՝ ՊԵԿ վարչություն: Իջեւանում գործում է միայն սպասարկման բաժինը: Այդ բաժնում Տավուշի մարզի հարկատուներին սպասարկում է պետական եկամուտների կոմիտեի 15 աշխատակից: Կենտրոնացման նույն գործընթացը կատարվել է բոլոր մարզերում: Փոխանակ գերհագեցած Երեւանը բեռնաթափեն՝ ավելի են մեծացնում՝ մարզերում աշխատատեղերը, հաստիքները տեղափոխելով Երեւան:

ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻ ՀԱՏՎԱԾ ԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ

2024 թ. մայիսի 27-ի ջրհեղեղի, Աղստեւ գետի մակարդակի բարձրացման հետեւանքով Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Դիլիջան համայնքի տարածքի մի քանի հատվածներում ճանապարհի եզրը քանդվել է: Դիլիջան քաղաքի հյուսիսային ծայրին՝ Դիլիջանի «Գետափ» ռեստորանահյուրանոցային համալիրի մոտ, ավտոճանապարհի եզրը մեծ երկարությամբ քանդված էր: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մեր տեղեկատվական հարցմանն ի պատասխան հայտնել էր, որ մինչեւ 2024 թվականի վերջ «Գետափ» ռեստորանահյուրանոցային համալիրի մոտ քանդված ճանապարհահատվածը կվերականգնվի: Տարին ավարտվեց, սակայն ճանապարհի եզրի վերականգնումը շարունակվում էր: Ներկա դրությամբ այդ հատվածում ավտոճանապարհի եզրի նորոգումն ավարտված է, սակայն դրան կից ճանապարհի ասֆալտի ծածկը չեն նորոգել, տեղադրված են արագության սահմանափակման ճանապարհային նշաններ: 2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից քանդված մեծ հատված կա նաեւ միջպետական ավտոճանապարհի Թեղուտ գյուղի եզրով ձգվող տարածքում: Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի շենքի դիմաց, միջպետական ավտոճանապարհի եզրին, Աղստեւ գետի ձախ ափին ջրհեղեղից վնասված մեծ տարածք կա, որը պատել են խճաքարերով: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, պատասխանելով մեր թղթակցի ուղարկած տեղեկատվական հարցմանը, հայտնել է, որ բնական տարերքից վնասված, միջպետական ավտոճանապարհին հարակից վերոհիշյալ հատվածների վերանորոգումը կկատարվի այս տարվա գարնանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱՐԻԵՐԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՓՈՐՁԱԳԵՏ, ԱՊԱ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Armlur.am-ը հետաքրքիր տեղեկություններ է գտել Առողջապահական եւ տեսչական մարմնի ղեկավար Սլավիկ Սարգսյանի վերաբերյալ:

Այսպիսով՝ վերջին 3 տարիները շրջադարձային են եղել Սարգսյանի կարիերայի համար: Բանն այն է, որ նա մինչ Տեսչական մարմին տեղավորվելը եղել է «Ալֆաֆարմ» ՓԲԸ-ի խորհրդատու վաճառող, որից հետո դեղատան վարիչ, դեղատնային ցանցի վաճառքի տնօրեն, ապա Հայաստանի Հանրապետության առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնում որպես դեղերի շրջանառության վերահսկողության վարչության փորձագետ: Հետաքրքիրն այն է, որ Սլավիկ Սարգսյանը 2 ամիս փորձագետի հաստիքում աշխատելուց հետո կտրուկ դարձել է Հայաստանի Հանրապետության առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ:

ArmLur.am-ը ուսումնասիրել է Սլավիկ Սարգսյանի՝ 2023 թվականի եկամուտների, անշարժ գույքի, շահերի եւ ծախսերի հայտարարագիրը՝ փորձելով հասկանալ, թե այս տարիների ընթացքում ինչպես է ֆինանսապես փոխվել երիտասարդ պաշտոնյայի վիճակը:

Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Սլավիկ Սարգսյանի՝ 2024 թվականին ներկայացրած հայտարարագրի համաձայն՝ 2023 թվականը նրա համար եղել է բավականին հաջող տարի առնվազն ֆինանսական տեսանկյունից:

Սլավիկ Սարգսյանը հայտարարագրել է 1994 թվականին ձեռք բերված բնակարան, որը գտնվում է Սյունիքի մարզի Մեղրի համայնքում: 2023 թվականին Տեսչական մարմնի ղեկավարը ձեռք է բերել 2017 թվականի արտադրության Mazda մակնիշի մեքենա, որի արժեքը կազմել է 3 մլն 940 հազար դրամ:

Զգալի ավելացել են նաեւ բանկային հաշիվների մնացորդները: Այսպիսով՝ Սարգսյանը 2023 թ. համար հայտարարագրել էր ընդհանուր 10 միլիոն դրամից ավելի կազմող երկու բանկային հաշիվներ: Դա մոտ 8 միլիոն դրամով ավելին է քան մեկ տարի առաջ հայտարարագրածը: 2022 թ. պաշտոնյան հայտարարագրել էր ընդամենը 2 միլիոն 600 հազար դրամ, իսկ դրա նախորդած տարում ընդամենը 1 միլիոն 450 հազար դրամ: Սարգսյանը 2023 թվականի ընթացքում իր ղեկավարած Հայաստանի Հանրապետության առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնից ստացել է 14 միլիոն 700 հազար դրամ աշխատանքի վարձատրություն: 2022 թվականին Սարգսյանի վարձատրությունը՝ որպես Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի վարձատրություն, կազմել է 8 միլիոն 500 հազար դրամ:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2023 թվականի օգոստոսի 11-ի N 837-Ա որոշմամբ Սլավիկ Սարգսյանը նշանակվել է ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՋԱԿՑԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ

ԱՄՆ Սենատը հաստատել է Թուլսի Գաբբարդի թեկնածությունը՝Ազգային հետախուզության տնօրենի պաշտոնում: Նրա թեկնածությունը պաշտպանել է 52 սենատոր, դեմ են եղել 48-ը: Գաբբարդը կղեկավարի ԱՄՆ ներքին եւ արտաքին հետախուզական ծառայությունները, նեռառյալ Կենտրոնական հետախուզական վարչությունը եւ Հետաքննությունների դաշնային բյուրոն: Գաբբարդն իր քաղաքական կարիերան սկսել է 2002 թվականին:

Նա Իրաքի պատերազմի վետերան է, ով 2004-ից 2005 թվականներին ծառայել է բժշկական բաժանմունքում: Այնուհետեւ նա դարձել է Հավայան կղզիների ազգային գվարդիայի մայոր, իսկ ավելի ուշ ստացել է ԱՄՆ բանակի պահեստազորի փոխգնդապետի կոչում: Գաբբարդը 2013-2021 թվականներին ծառայել է որպես Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի անդամ: 2019 թվականին նա հայտարարել էր ԱՄՆ նախագահի պաշտոնում առաջադրվելու իր մտադրության մասին, սակայն հետագայում աջակցել էր Ջո Բայդենին: 2022 թվականի հոկտեմբերին Գաբբարդը լքել էր «Դեմոկրատական» կուսակցությունը, աջակցել Դոնալդ Թրամփին եւ 2024 թվականի հոկտեմբերին միացել «Հանրապետական» կուսակցությանը: 2024 թվականի նոյեմբերին Դոնալդ Թրամփը նրա թեկնածությունն առաջադրել էր Ազգային հետախուզության տնօրենի պաշտոնում: Նշենք, որ Գաբբարդը բավական սերտ հարաբերություններ է պահպանում ԱՄՆ հայկական կառույցների հետ: 2017 թվականին նա, որպես Կոնգրեսի անդամ, այցելել է Հայաստան եւ Արցախ՝Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի կողմից կազմակերպված համաժողովի շրջանակներում, աջակցել է Կոնգրեսում հայկական շահերին, քվեարկել է Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւերի օգտին եւ դատապարտել է Ադրբեջանի հարձակումն Արցախի դեմ: Նա ծագումով Հավայան կղզիներից է, այս նահանգը 2016 թվականին ճանաչել էր Լեռնային Ղարաբաղի անկախությունը:

ՄԻՆՉԵՎ 4 ՄԼՆ ԴՐԱՄ

Կառավարությունը հիմնավորման համաձայն՝2024 թ. հունիսի 15-ից մեկնարկել է բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրերի տրամադրման գործընթացը, հուլիսի 15-ից մեկնարկել է անհատական բնակելի տան կառուցման հավաստագրերի տրամադրման գործընթացը, գործող հիփոթեքային վարկի մարման աջակցության հավաստագրերի տրամադրման գործընթացը մեկնարկել է օգոստոսի 1-ից: Փոփոխություններով կարգավորվում եւ պարզաբանվում են իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները, ինչպես նաեւ վերանայվում են ծրագրի այն պայմանները, որոնք խոչընդոտում են հավաստագրերի արդյունավետ իրացմանը: Մասնավորապես՝ հստակեցվում է, որ դիմում-հայտարարության մեջ գրանցված ամուսինների եւ նրանց անչափահաս երեխաների տվյալների առկայությունը պարտադիր է, իսկ մյուս անդամներին ըստ իրենց ցանկության, բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինը կամ երեխան ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության կողմից չեն հաշվառվել որպես բռնի տեղահանված կամ հանդիսանում են աջակցության ծրագրի շահառու: Սահմանվում է, որ եթե շահառու ընտանիքն ընտրում է ծրագրի՝ անհատական բնակելի տան կառուցման բաղադրիչը, ապա իրացվող հավաստագրի արժեքում ներառվող անհատական բնակելի տան կառուցման համար նախատեսված հողի նկատմամբ մակերեսի սահմանաչափ չի կիրառվում, աջակցությունը սահմանվում է մինչեւ 4 մլն դրամ 3-ի փոխարեն:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅԱՑԵԼ Է «ՖԱՍԹ» ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Ֆասթ» բանկի աջակցությամբ Բարդերի ակումբի հեղինակ կատարողներն օրերս Ազգային Տիկնիկային թատրոնում իրականացրել են բարեգործական երեկո: Բարդերի ակումբի այս տարվա առաջին համերգի հասույթն ուղղվելու է «Օգնենք հայ մանուկներին» բարեգործական հասարակական կազմակերպությանը: Համերգին հնչել են Վախթանգ Հարությունյանի, Արմինե Հայրապետյանի, Էդուարդ Ջորիկյանի, Լիլիթ Բլեյանի եւ այլոց կատարումները: Բարդերի ակումբի հիմնադիր, երգահան Վախթանգ Հարությունյանն ասել է. «Շատ շնորհակալ եմ, որ «ֆասթ» բանկն իր քաղաքականության մեջ ինտեգրել է մշակութային քաղաքականությունը: Այս համերգային ծրագիրը, իհարկե, բացառություն չէ, քանի որ աջակցությունը «Ֆասթ» բանկինն է: Եվ այդ աջակցությունն է, որի շնորհիվ մենք այս դահլիճում հավաքված տոմսի գումարները կկարողանանք ուղղել մշակութային երեւույթից դուրս՝ սոցիալական տարբեր խոցելիություն ունեցող հարթակներ»: «Ֆասթ» բանկի օժանդակությամբ կայացած միջոցառումը հնարավորություն կտա աջակցել «Օգնենք հայ մանուկներին» ՀԿ-ի շահառու երեք երեխաների՝ իրենց շարունակական թերապիայի եւ առողջության բարելավման հարցում: «Ֆասթ» բանկը կարեւորում է ոչ միայն հեղինակ կատարողների ստեղծագործական առաջընթացն ու գործունեության իրականացումը, այլեւ հայկական հեղինակային երգի ավանդույթների պահպանումը՝ միաժամանակ մասնակից դառնալով բարեգործությանը: «Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ի՝ 2024 թ. տարեկան հաշվետվությունը

ԵԿԱՄՈՒՏ

Այդ թվում՝

թերթեր՝ 4.827.190 (չորս միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հարյուր իննսուն) դրամ:

Գովազդ՝ 65.768.624 (վաթսունհինգ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր քսանչորս) դրամ:

ԾԱԽՍԵՐ

Այդ թվում՝

Տպագրական ծախս՝ (6.120.000 վեց միլիոն հարյուր քսան հազար) դրամ:

Աշխատավարձ՝ 50.762.418 (հիսուն միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր տասնութ) դրամ:

Այլ ծախսեր՝ 5.850.289 (հինգ միլիոն ութ հարյուր հիսուն հազար երկու հարյուր ութսունինը) դրամ:

ՀԱՐԿԵՐ

Եկամտահարկ՝ 9.589.485 (ինը միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար չորս հարյուր ութսունհինգ) դրամ:

Շրջ. հարկ՝ 3.360.836 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ութ հարյուր երեսունվեց) դրամ:

Սոց. վճար՝ 2.151.196 (երկու միլիոն հարյուր հիսունմեկ հազար հարյուր իննսունվեց) դրամ:

Դրոշմանիշ՝ 694.000 (վեց հարյուր իննսունչորս հազար) դրամ:

Fastex-ի ՀՐԱՎԵՐՈՎ

Գ

ԻՆՔՆԱՏԻՊ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեւանյան փողոցները համալրվել են աշխարհահռչակ սթրիթ արտիստ Ալեք Մոնոպոլիի ինքնատիպ ստեղծագործություններով: Ալեք Մոնոպոլի անվամբ հայտնի ազգությամբ հայ Ալեք Անդոնը սթրիթ արտիստ է եւ դիջեյ՝ ծագումով Նյու Յորֆից: Ինքնությունը թաքցնելու համար նրան հատուկ է դեմքը ձեռքով ծածկելը կամ բժշկական դիմակ կրելը: Առավել հայտնի է Parker Brothers-ի «Մոնոպոլիա» սեղանի խաղի «Mr. Monopoly» կերպարի օգտագործմամբ, որին պատկերում է ամոկինգով եւ գլխարկով:

Հունվարի 18-20-ը Ալեք Մոնոպոլին «Ֆասթեքսի» համահիմնադիր Վիգեն Բաղալյանի հրավերով հյուրընկալվել էր Հայաստան եւ նվեր մատուցել Երեւան քաղաքին՝ սիրված կերպարը նկարելով Թումանյան 31 հասցեում գտնվող սպիտակ բարձրահարկ շենքի կողային հատվածում եւ Սարյան 6 հասցեում գտնվող «Տապաստան» ռեստորանի դռան կողքի պատի վրա:

Նկարչի ստեղծագործություններում վառ արտահայտված է ուրբանիստական բնույթը: Աշխատել է տարբեր միջավայրերում՝ Մայամի, Լոս Անջելես, Մեքսիկա, Եվրոպա եւ Ասիա՝ օգտագործելով տարատեսակ նյութեր, այդ թվում՝ տրաֆարետներ, ներկեր, էպոքսիդներ, լաքեր եւ թերթեր, եւ պատկերելով փոփ մշակույթի բազմաթիվ կերպարներ: Ալեք Մոնոպոլիի մենաշնորհային գործերը գնել են այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպիսիք են՝ Ֆիլիպ Փլեյնը, Մայլի Սայրուսը, Ռոբին Թիքը, Մնուփ Դոգը, Սեթ Ռոգենը, Էդրիեն Բրոուդին, Իգի Ազալիան եւ այլք: Մոնոպոլին համագործակցել է նաեւ հայտնի բրենդների՝ TAG Heuer-ի, Dom Perignon-ի, Philipp Plein-ի, Hermes-ի հետ:

Սթրիթ արթի արքան նկարել է նաեւ 4 AKNEYE քանդակի վրա, որոնք այժմ գտնվում են Միացյալ Էմիրություններում: 2024 թվականի դեկտեմբերին Ռաս-Ալ Խայմայում տեղի ունեցած Harmony Meetup VI-ի շրջանակում ներկաները հնարավորություն ունեցան վայելելու արտիստի ֆենոմենալ արվեստի կենդանի ցուցադրությունը քանդակների վրա, ինչը նշանավորեց Ալեքի եւ AKNEYE-ի ուշագրավ համագործակցությունը:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒՅՔԸ ԿՕՏԱՐՎԻ

Պետական գույքն օտարելու մասին որոշում է կայացվել: Խոսքը Երեւանի Իսակովի պողոտա 17/2, 17/5, 17/6 եւ 17/7 հասցեներում գտնվող հողամասերի մասին է, որոնք կօտարվեն դասական աճուրդով: Աճուրդով օտարման ենթակա Գույքի վաճառքի նվազագույն մեկնարկային գինը սահմանվել է գնահատված արժեքի 100 տոկոսի չափով՝ համաձայն որոշման նախագծի հավելվածի: Ըստ այդմ, 4 հողամասերի արժեքներն են 2,78 մլրդ դրամ, 544 մլն դրամ, 1 մլրդ դրամ եւ 2,84 մլրդ դրամ:

Նախագծով գնորդը պարտավորվում է վճարել նաեւ գույքի արժեքի որոշման ծառայությունների վճարը՝ համաձայն որոշման նախագծի հավելվածի (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը ենթակա է վճարման աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելու օրվանից մեկամսյա ժամկետում՝ «Գույքի գնահատման եւ աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան հաշվին եւ չի համարվում գույքի վաճառքի գնի մաս:

ԱՌԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ

Կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման եւ փոխանակման մասին փոխըմբռնման հուշագրի ստորագրման առաջարկին:

Հուշագիրը նախատեսում է, որ Հայաստանի եւ ԱՄԷ քաղաքացիները՝ ոչ բնակության նպատակով ժամանելու դեպքում, կարող են առանց լրացուցիչ քննությունների օգտվել իրենց ունեցած վարորդական վկայականից: Իսկ բնակության նպատակով ժամանող քաղաքացիների դեպքում կդյուրացվի վարորդական վկայականի փոխանակման գործընթացը, եւ նրանք կազատվեն տեսական եւ գործնական քննություններից: Երկու երկրների վարորդական վկայականները կճանաչվեն առանց լրացուցիչ ընթացակարգերի՝ չվերահաստատելով դրանց վավերականությունը: ՀՀ կամ ԱՄԷ-ում բնակության իրավունք ստացած անձինք կարող են իրենց երկրի վարորդական վկայականը փոխանակել առանց քննության: Հուշագրի շրջանակում հաշվի են առնվելու վարորդական վկայականների տարիքային սահմանափակումները, որոնք սահմանված են երկու երկրների օրենսդրությամբ: ՀՀ ներքին գործերի նախարարության համաձայն՝ այս համաձայնագիրը նպաստելու է երկու երկրների միջեւ տրանսպորտային ոլորտի համագործակցության զարգացմանը, ինչպես նաեւ առավել հարմարավետ պայմաններ կապահովվեն Հայաստանում բնակություն հաստատած ԱՄԷ քաղաքացիների եւ ԱՄԷ-ում ապրող հայերի համար: Հուշագիրը կնպաստի նաեւ Հայաստանի կառավարության՝ 2021-2026 թվականների ծրագրի արտաքին քաղաքական ուղղությունների իրականացմանը, մասնավորապես՝ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների հետ փոխգործակցության ընդլայնմանը:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«44-օրյա պատերազմից չհուղարկավորված մարմիններից փոքրաթիվ դեպքեր կան, որ վերջին շրջանում հուղարկավորել ենք, աշխատանքներն այս ուղղությամբ շարունակվում են», - ասել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Նա հավելել է. «Միջգերատեսչական խմբի շրջանակներում ամեն մարդ իր գործառույթները տանում է, որպեսզի այս գործընթացում հնարավորինս ճիշտ եւ բոլոր հանգամանքները հաշվի առնելով կարողանանք ի վերջո բոլոր աճյունները հուղարկավորել»:

Նախարարը պարզաբանել է, որ իր թվարկածների դեպքում ծնողներն են իրենց համաձայնությունը տվել եւ հուղարկավորությունն էլ իրենք են արել. «Այն դեպքերում, երբ նույնականացումն իրականացվել է, բայց ծնողները, հարազատները չեն ընդունում արդյունքները, այս մասով դեռ աշխատանքները շարունակվում են: Երբ քննարկման արդյունքը լինի, ես իմ լիազորությունների շրջանակում տեղյակ կպահեմ»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ»

«ԵՍ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՄԻՔՍ ԵՄ». ԱԹԵՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի «Եվրատեսիլ» երգի մրցույթին շաս ֆիչ ժամանակ է մնացել: Երգի մրցույթի համար այս տարի հայկական կողմից մասնակցում են 12 թեկնածուներ. իսկ դա նշանակում է, որ ամեն բան թեժ է անցնելու: Եվրատեսիլի հայկական ղատվիրակի անունը կորոշվի փետրվարի 16-ին մրցույթի միջոցով: «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Հայաստանի ղատվիրակներից Աթենա Մանուկյանի հետ, ով շատերի սրտերը գրավել է ոչ միայն իր հրաղուրիչ տեսքով, այլև հեքիաթային ձայնով:

-Աթենա՛, բավականին հետաքրքիր եւ հիշվող անուն ունեք, նույնիսկ՝ անսովոր: Որտեղի՞ց եք ծնունդով, ինչպե՞ս եւ ո՞վ է որոշել Ձեր անունը:

-Ծնողներս են որոշել իմ անունը: Աթենան հունական անուն է, Մանուկյանը՝ հայկական ազգանուն, եւ սա իսկապես լավ միքս է:

-Ո՞ր տարիքից եք զբաղվում երգով եւ ո՞ր լեզվով եք նախընտրում երգել:

-12 տարեկանից սկսել եմ ելույթներ ունենալ: Ես մասնակցեցի մի հեռուստատեսային շոուի եւ հաղթեցի մրցույթում: 13 տարեկանում ես մասնակցեցի մանկական «Եվրատեսիլին» Հունաստանում եւ 16 տարեկանից սկսեցի ելույթներ ունենալ տարբեր ակումբներում՝ հանդես գալով տարբեր միջոցառումների շրջանակներում:

-Ձեր կյանքը 10 տարի անց որտե՞ղ եք պատկերացնում՝ ՀՀ-ո՞ւմ, թե՞ Աթենքում: Ո՞ր երկիրն եք առավել նախընտրում:

-Ես նույնիսկ չեմ կարող ասել, թե իմ կյանքը ինչ տեսք կունենա վեց ամիս անց, սակայն վստահ կարող եմ ասել, որ կարող եմ լինել հաջողակ իմ կյանքում եւ կարիերայում:

-Դեռ 2020 թվականից շատերի սրտերն ուղղակիորեն գրավել եք եւ 5 տարի շարունակ շատերն էին սպասում Ձեր վերադարձին «Դեպի Եվրատեսիլ»: Ինչպե՞ս ստացվեց, որ մասնակցում եք, ինչպե՞ս այդ որոշմանը եկաք:

-Ես նախկինում արդեն այս մասին ասել եմ եւ հիմա էլ ասեմ, որ մենք կարծես չավարտված բիզնես ունենք այստեղ, եւ ամեն բան իր ժամանակն ունի:

-5 տարի առաջ նշել եք, որ «Դեպի Եվրատեսիլում» չհաղթելու դեպքում՝ Ձեր ուժերը փորձելու եք հայկական շոու բիզնեսում: Ինչպե՞ս եք այժմ ինքնադրսեւորվում հայկական շոու բիզում եւ ի՞նչ բացեր եք նկատում:

-Ես կարող եմ խոսել Հայաստանի ավանդույթների մասին եւ այն որակի մասին, որն առհասարակ պահում են շոու բիզնեսում երաժշտության մեջ: Լավ կլիներ, որ հայկական շոու բիզնեսում այնպիսի արտիստ լիներ, որ փոփ երաժշտությունը ներկայացներ հանրությանը: Ես կարծում եմ, որ «Եվրատեսիլը» կարող է դա իրականություն դարձնել, այսինքն՝ լինի փոփ արտիստ, որը կներկայացնի Հայաստանը:

-Կարելի՞ է ենթադրել, որ դեռ 2008 թվականին, երբ մասնակցում էիք Հունաստանի մանկական «Եվրատեսիլին», այդ ժամանակից ամեն բան սկսվեց:

-Եվրատեսիլյան իմ ճանապարհորդությունը սկսվեց 13 տարեկանում եւ, կարծես թե, շարունակվեց այն ժամանակ, երբ ես 2015-ին եկա Հայաստան ու ելույթ ունեցա Հայաստանում, սակայն ոչ «Եվրատեսիլի» համար: 2015-ից սկսած՝ հայ ժողովուրդը ցանկանում էր, որ ես Հայաստանը ներկայացնեմ եվրատեսլի շրջանակում: Ամեն բան առաջին անգամ տեղի ունեցավ 2020 թվականին:

-Այս տարի պայքարը «Եվրատեսիլում», կարելի է ասել, թեժ է լինելու, քանի որ 12 մասնակիցներ կան: Ինչպե՞ս եք տրամադրված եւ ի՞նչ ակնկալիքներ ունեք:

-Ես մշտապես լավ եմ տրամադրված եւ մշտապես աշխատում եմ, որ ամեն բան լավ լինի, այսինքն՝ իմ ամբողջ ներուժն ու աշխատանքն ուղղված են լավ արդյունքի: «Դաքուինեյշն» երգը, որով ես հանդես եմ գալիս «Դեպի Եվրատեսիլի» նախընտրական փուլում, գրել եմ 5 տարի առաջ՝ արդեն հստակ ու վիզուալ պատկերացնելով, թե ինչպիսին է այն լինելու. այդպես էր նաեւ «Չեյզ օն յու» երգի պարագայում, որը 2020 թվականի նախընտրական փուլում էր արդեն ներկայացված, բառերի հեղինակը ես եմ, եւ երգը համատեղ գրվել է ԴիԶեյ Պակոյի հետ: Այն իմ կյանքի մասին է, կարծես լինի կյանքի դասերի վերաբերյալ: Ինձ համար շատ էմոցիոնալ երգ է այն, քանի որ վերաբերում է բոլոր այն խոչընդոտներին եւ խնդիրներին, որոնց ես բախվել եմ այս ամբողջ ընթացքում:

-Ունե՞ք մասնակիցներից Ձեր ֆավորիտին եւ ո՞ւմ եք համարում Ձեզ մրցակից:

-Մեզնից յուրաքանչյուրը տարբեր պատմություններ է ներկայացնում, եւ մեզնից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ ձայնը: Կարեւորն այն է, որ ամեն մեկս պատմելու է իր սեփական՝ յուրահատուկ պատմությունը, եւ կարծում եմ՝ մեզնից ոչ ոք այս փուլը չի դիտարկում որպես մրցակցություն:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՄՆԱ «ԲԱՐՍԱՅՈՒՄ»

«Բարսելոնայի» մարզական տնօրեն Դեկուն պատասխանել է «կապտանռնագույնների» երիտասարդ կիսապաշտպան Լամին Յամալի հետ նոր պայմանագրի շուրջ բանակցությունների մասին հարցին: «Մենք առանցքային խաղացողներ ունենք, Լամինը նրանցից մեկն է: Քննարկումներ չեն եղել, մենք գին չենք սահմանել Յամալի համար: Առաջարկներ չեն եղել, քանի որ մենք չենք էլ նախատեսում այդ հարցը քննարկել: Լամինը, անկասկած, երկար տարիներ կմնա «Բարսայում»: Այս մրցաշրջանում Լամինը բոլոր մրցաշարերում անցկացրել է 31 հանդիպում՝ դառնալով 11 գոլի եւ 14 գոլային փոխանցման հեղինակ: Ֆուտբոլիստի գործող աշխատանքային պայմանագիրն ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2026 թվականի ամառ: Transfermarkt պորտալում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 180 միլիոն եվրո:

ԱՌԱՆՑ ՏԻՏՂՈՍԻ ՉԻ ԱՎԱՐՏԻ

Թեթեւ քաշային կարգում UFC-ի չեմպիոն (մինչեւ 70 կգ) ռուս Իսլամ Մախաչեւը հայտնել է, որ մտադիր չէ կարիերան ավարտել առանց երկրորդ տիտղոսի: «Ես չեմ ուզում ավարտել կարիերան, քանի դեռ երկրորդ տիտղոսը չեմ նվաճել: Եվ իրականում կարեւոր չէ, թե որ քաշով»,- ասել է Մախաչեւը: Իսլամ Մախաչեւը 33 տարեկան է: Նա, որպես պրոֆեսիոնալ խառը մենամարտի մարտիկ, իր նորամուտը նշել է 2010 թվականին, իսկ UFC-ում հանդես է գալիս 2015 թվականից

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

Սաուդյան Արաբիայի «Ալ-Նասրի» եւ Պորտուգալիայի հավաքականի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն առաջին տեղն է զբաղեցրել 2024 թվականի ամենաբարձր վարձատրվող մարզիկների ցանկում:

2024 թվականի ամենաբարձր վարձատրվող մարզիկների տասնյակը՝

Կրիշտիանու Ռոնալդու (ֆուտբոլ)- 260 միլիոն դոլար,

Սթիվեն Կարի (բասկետբոլ) -153,8 մլն դոլար,

Թայսոն Ֆյուրի (բռնցքամարտ) - 147 մլն դոլար,

Լիոնել Մեսսի (ֆուտբոլ) - 135 միլիոն դոլար,

Լեբրոն Ջեյմս (բասկետբոլ) -133,2 մլն դոլար,

Նեյմար (ֆուտբոլ) -133 մլն դոլար,

Ալեքսանդր Ուսիկ (բռնցքամարտ) - 122 միլիոն դոլար,

Կաիմ Բենզեմա (ֆուտբոլ) - 116 մլն դոլար,

Կիլիան Մբապե (ֆուտբոլ) - 110 միլիոն դոլար,

Ջոն Ռահմ (գոլֆ) - 105,8 մլն դոլար:

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ԴԵՐԱՍԱՆԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԱՄՆ

«Փահլեւան» մոնոներկայացումը հասավ ԱՄՆ: Դերասան Ռաֆայել Երանոսյանը մեկնում է ԱՄՆ, որտեղ էլ մարտի 14-ին կկայանա «Փահլեվան» մոնոներկայացումը: Դերասանն իր ինստագրամյան եւ ֆեյսբուքյան էջերում հրապարակում է արել այդ մասին, որին կից գրել է. «Դե՛ ինչ, ԱՄՆ-ում բնակվող շատ սիրելի հայրենակիցնե՛ր, հանդիպում ենք մարտի 14-ին Փասադենայում»: Հավելենք, որ Ռաֆայել Երանոսյանը իր մոնոներկայացմամբ շրջագայել է Եվրոպայի տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Բարսելոնայում, Լիոնում, Համբուրգում եւ մի շարք այլ քաղաքներում: Նշենք, որ 2024 թվականի վերջին «Փահլեվան» ներկայացումը կայացավ դեկտեմբերի 28-ին «Բոհեմ» Թատրոնում:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ՉԿԱ

ԿԳՄՍ նախարարությունը դիմել է «Դոպինգ Սփեյս» ընկերությանը՝ Սնուփ Դոգին վճարած 1,8 մլն դոլար հոնորարը վերադարձնելու համար. պատասխան առայժմ չկա:

«Դիմել ենք կազմակերպությանը համապատասխան պահանջով, այս պահին սպասում ենք կազմակերպության կողմից գործողություններին: Դեռեւս այդ գործընթացում ենք, ինքներս կիրազեկենք հենց որ անցնենք հաջորդ փուլ»,- ասել է նախարարը: Հիշեցնենք, որ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 4-ի թիվ 55-Ա որոշմամբ կարճել է Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նկատմամբ Սնուպ Դոգի համերգի կազմակերպման նպատակով «Դոպինգ Սփեյս» ընկերությանը պետական օժանդակության տրամադրման առնչությամբ հարուցված վարույթը: Այս մասին հայտնում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը:

Ինչպես տեղեկանում ենք որոշումից, «Դոպինգ Սփեյս» ընկերությունից հայտնել են, որ համերգի չեղարկումից առաջ կատարվել էին որոշ չվերականգնվող ծախսեր, ներառյալ՝ արտիստին վճարված հոնորարը, սակայն Սնուփ Դոգը համերգի համար ստացած հոնորարը հետ է վերադարձրել:

● *Մարտի 2-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Պրոֆ արտ» եւ «Ֆոլկ-մոդեռն» ժողգործիքների նվագախմբի ներկայացումը: Տոմսերը՝3000-6000 դր.:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեմ, թե ի՞նչ կարգով է իրականացվում ծննդի պետական գրանցումը, ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ծննդի պետական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում ծննդի պետական գրանցումը, որտե՞ղ է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Լարիսա Մխիթարյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լարիսա Մխիթարյանի հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ ամուսնության մեջ գտնվող հայրը եւ մայրը գրառվում են որպես երեխայի ծնողներ՝ նրանցից որեւէ մեկի դիմումի հիման վրա: Երեխայի ծննդի գրանցման համար ներկայացվում է գրավոր հայտարարություն, ծնողների /ծնողներից մեկի/ եւ դիմողի անձը հաստատող փաստաթուղթ, երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք համարվող փաստաթղթեր (օրինակ՝ ամուսնության վկայական, ամուսնալուծության վկայական, հոր մահվան վկայական), երեխայի ծնունդը հաստատող փաստաթուղթ, մասնավորապես՝ ծննդյան մասին սահմանված ձեւի փաստաթուղթ՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը: Ծննդի պետական գրանցման, ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Որդեգրումը հաստատվում է դատարանի կողմից եւ դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո որդեգրումը ենթակա է պարտադիր պետական գրանցման ՔԿԱԳ տարածքային մարմնում: Որդեգրողներ կարող են լինել չափահաս անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Հայաստանում պետական մանկատներում երեխաների ընդհանուր թվաքանակը 2022թ.-ի ամփոփ տվյալներով կազմել է 590, նախորդ տարի 583 էր, իսկ 2020-ին՝579: Ըստ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների՝ խնամատար ընտանիքներում ընդգրկված երեխաների թվաքանակը 2022թ.-ին կազմել է 107, որդեգրված երեխաների թվաքանակը 20 է:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ բացատել, թե ի՞նչ է գնաճը:

Հարություն Կիրակոսյան (40 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարցին ի պատասխան հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը որոշակի պարբերականությամբ ՀՀ տնտեսության առանձին հատվածների համար հաշվարկում է գների շարժը ներկայացնող ժամանակային շարքեր՝գների ինդեքսներ:

Օրինակ՝ սպառողական շուկայի համար՝սպառողական գների ինդեքս, ընդհանուր տնտեսության համար՝ ՀՆԱ-ի դեֆլյատորը, որը տնտեսությունում արտադրված բոլոր ապրանքների եւ ծառայությունների գների միջին աճն է, արտաքին առեւտրում՝ արտահանման գների ինդեքս, ներմուծման գների ինդեքս եւ այլն: Ցանկացած ինդեքսի հավելաճի տեմպն այդ հատվածի, կամ ճյուղի գնաճն է եւ հաճախ ունի հաշվարկման մեթոդական առանձնահատկություն:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում գնաճ տերմինը հիմնականում կիրառվում է, երբ խոսքը գնում է սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) հավելաճի տեմպի մասին: Այն թեեւ ամբողջովին չի արտացոլում տնտեսությունը, սակայն, առավել ընկալելի է հասարակության համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ից

Երեկ խոշոր ավտովթար է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 05:40-ի սահմաններում Foton մակնիշի բեռնատարը Երեւան-Վանաձոր ավտոճանապարհի Ուշիի ոլորաններում, դեռեւս անհայտ հանգամանքներում, դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել երկաթե արգելապատնեշներին եւ կողաշրջվել՝ մասամբ հայտնվելով երթեւեկելի գոտում:

Վարորդը տեղում ենթարկվել է սթափության փորձաքննության, պարզվել է, որ նա սթափ է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-4 -11 -3 +2
Կոտայքի լեռներ	-6 -10 -2 +2
Կոտայքի նախալեռներ	-4 -9 0 +3
Գեղարքունիք	-6 -11 -3 +1
Լոռի	-7 -10 -1 +4
Տավուշ	-3 -6 0 +2
Արագածոտնի լեռներ	-9 -14 -2 +4
Արագածոտնի նախալեռներ	-1 -3 -1 +5

Արարատ	0 -5 +1 +4
Արմավիր	-3 +1 +4 +6
Վայոց ձորի լեռներ	-4 -7 +2 +4
Վայոց ձորի նախալեռներ	-2 +2 +4 +6
Սյունիքի հովիտներ	-6 -9 0 -4
Սյունիքի նախալեռներ	0 +3 +7 +10
ԼՂՀ	0 +2 +6 +8
Երեւան	-1 -3 +7 +9

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.2.2025**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*